ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱԿԸ

Այս տարի մարտին լրանում է ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի գոյության 25-ամյակը:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ հունվարի 2-ին Իր գրած օրհնաբեր կոնդակի մեջ, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 6) գեղեցկորեն նշում էր, որ **«Մեր սուրբ տաճարներեն դեպի երկինք բարձրացող երգված խոսքը, ամենահարազատ կերպն է աղոթքի: Աղոթքը՝ կրոնական հույզերով թաթավուն խոսքն է մարդուն առ Աստված»:**

Արդարև, հայ եկեղեցիներում հավատացյալների հոգևոր-կրոնական դաստիարակության մեջ բարերար և ներգործող ազդեցություն է ունենում հոգևոր երգը՝ դառնալով միաժամանակ ներշնչումի և ոգևորության անսպառ աղբյուր:

Հայ հոգևոր երգը պայծառ ու ճշմարիտ արտահայտությունն է մեր սրբազան նախնիների կրոնական զգացմունքների, երգ, որը ոչ միայն զարգացնում է քրիստոնեական աստվածապաշտությունը ու կրոնական եռանդը հավատացյալի հոգում, այլ նաև հանդիսավորություն ու վեհություն հաղորդում եկեղեցական պաշտամունքին. «որք զծորանս Հոգւոյն արբին և ընդ ժամանակս ժամանակըս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»:

Եվ ահա հոգևոր այդ երգը, կրոնական այդ վեհ երաժշտությունը, իբր աղոթք ու խոսք, հավատացյալին է մատուցվում միշտ մեր եկեղեցիների երգեցիկ խմբերի միջոցով:

Այդ նվիրական ու հոգևոր առաքելության է կոչված նաև ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախումբը, որը հիմնվել է 1948 թվականի մարտի 25-ին, «եկեղեցվո անդամ երաժշտասեր անձերու կողմե»:

«Կոմիտաս» երգչախմբի հիմնադիրներից են եղել Իսահակ Աբրահամյանը, Հովհաննես Հեփշեն և դոկտ. Արա Պոհգալին:

1958 թվականի մարտի 30-ին առաջնորդարանի երգեցիկ խումբը կոչվել է «Կոմիտաս երգչախումբ»՝ վայելելով նաև 1959 թվականի հուլիսից ԱՄՆ-ի հայոց արևելյան

թեմի թեմական խորհրդի և թեմական առաջնորդի պաշտոնական հովանավորությունը:

«Կոմիտաս» երգչախմբի «նպատակն է ծառայել անձնվիրաբար ի պայծառություն Հայց. եկեղեցվո կատարելով պատարագներու և զանազան եկեղեցական արարողություններու ներդաշնակ երգեցողությունը և թեմին ծուխերուն մեջ ստեղծել խանդավառություն դեպի հայ երգն ու երաժշտությունը»:

«Կոմիտաս» երգչախումբը իր գոյության 25 տարիների ընթացքում երգել ու հնչեցրել է «անմահ Կոմիտասի արական խմբի համար ձայնագրած պատարագը, հոգեկան ափոփանք ու գոհունակություն տալով հավատացյալներուն»:

«Կոմիտաս» երգչախումբը ԱՄՆ-ի հայոց զանազան եկեղեցական համայնքներին կատարած իր այցելությունների առիթով կազմակերպել է նաև հոգևոր երաժշտության համերգ, հայ հավատացյալ ժողովրդի կրոնական դաստիարակության և երաժշտական ճաշակի ազնվացման համար:

«Կոմիտաս» երգչախումբը, նշում է Հայոց Հայրապետը Իր վերոհիշյալ կոնդակում, **«արվեստի բարձր մակարդակի հասած խումբ մըն է որ ոչ միայն կմխիթարե մեր հավատացյալ ժողովուրդը աղոթքի Տուներուն մեջ, այլ իր կազմակերպած համերգներով փառք կհյուսե մեր հոգևոր և ազգային երաժշտության, հայ և այլազգի հասարակության լայն խավերու մեջ հԱմերիկա»:**

Հանուն Հայոց Հայրապետի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը և բարեմաղթում նորանոր հաջողություններ, որպեսզի նա իրեն հատուկ նվիրումով և բարձր արվեստով հնչեցնի հայ հոգեվոր երգն ու շարականը ԱՄՆ-ի մեր սուրբ տաճարների գմբեթների ներքո, ինչպես նաև միջազգային բեմերում՝ ի փառս հայ երաժշտական արվեստի: